ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Վ.ԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ „Journal de S.—Pétersbourg՝ կիսապաշտօնական լրագիրը (Պետերբուրգում հրատարակւող), Կ. Պոլսից նոր տոմարով 1-ն յունիսի ստացած հեռագրի համաձայն՝ հաղորդում է, որ Սուլթանի իրաղէով թոյլատրւում է արքեպիսկոպոս Խրիմեանին, որ մի տարի առաջ ընտրւել էր Կաթողիկոս Ամենայն Հայոց, դուրս գալ թիւրքական հպատակութիւնից։ Ազգի ընտրեալը մտադիր է շուտով ճանապարհ ընկնել դէպի ս. Էջմիածին։

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՎԵԱԼՆԵՐԻՆ։ Մեր լոյսը թէ ս. Էջմիածինը իւր պարտքը կը կատարի ներկայ տարւայ թանկութեան չդիմացողներին՝ լիապէս արդարացաւ։ «Արարատ» ամսագրի մայիսի տետրում կարդում ենք ներկայ հրաւէրը.

«Հոգևոր իշխանութիւնը պարտք է համարում «Արարատ» ամսագրի միջոցով դիմել իւր սիրելի ազգայիններին և խնդրել օգնութեան ձեռք մեկնել քաղցածներին, որոնք ահա մէկ ամսից աւելի է որ խումբ-խումբ ամեն օր դիմում են ս. Էջմիածին և հաց են խնդրում։ Հոգևոր իշխանութիւնը, տեսնելով նրանց դառն արտասուքը, բացեց նրանց առաջը իւր շտեմարանի դռները ոմանց փոխարինաբար, ոմանց ձրի և ոմանց գնի զիջողութեամբ ցորեն տալով օգնեց։ Բայց Էջմիածինը նիւթական միջոց չունենալով բոլորի կարիքը լրացնելու՝ դիմում է Հայ Ազգին և խնդրում է նորա ուշադրութիւնը իւր աղքատ և չքաւոր եղբայրների վրայ։ Իրանց կարեաց չափով նուէրներ տւողները անուանական ցուցակով կարող են իրանց նուէրները ու-

դարկել ս. Էջմիածին, աղքատներին և չքաւորներին հասցնելու համար.

Դարձնում ենք «Մուրճ»-ի ընթերցողների ուշադրութիւնը ս. Էջմիածնի այդ մարդասէր հրաւէրի վրայ։

ՕՐ. Վ. ԱՐԴՈՒՀԻ ՑԱԿՈԲԵԱՆ ամսոյս 22-ին կարդաց մի հրապարակական դասախօսութիւն Կրթութեան գործի և նորա զարգացման մասին։ Դասախօսութիւնը բաժանուած էր երկու մասի. առաջնում դասախօսուհին մի ընդհանուր հայեացք ձգեց հին Յունաստանի կրթական գործի վրայ, անցաւ Հռոմ, ապա Եւրոպայի միջին դարերը, Վերածնութեան դարը և վերջացրեց նոր դարերի գլխաւոր մտածողներին, որոնք կարևորութիւն են ներկայացրել կրթական գործի համար։ Երկրորդ մասում դասախօսուհին կանգ առաւ մասնաւորապէս Զուիցերիայի կրթական գործի կազմակերպութեան վրայ։ Ներկայումս Դասախօսութիւնը լաչողակ էր բովանդակութեան կողմից, իսկ տպաւորութիւնը աւելի մեծ էր, քան կարելի էր սպասել։ Օր. Յակոբեանը կատարելապէս տիրապետում է հայերէնին, ունի լաւ դիկցիա, գիտէ նիւթին ջերմութիւն հաղորդել և ունկնդիրների ուշադրութիւնը լարած պահել։ Եթէ դասախօսութեան գլխաւոր նպատակն էր հասարակութեան մէջ սէր արթնացնել դէպի դաստիարակութիւնը և ուշք դրաւել դէպի այդ մեծ խնդիրը, դասախօսուհին լիապէս հասաւ իւր նպատակին։

Օր. Վ. Յակոբեանը, որին ջերմագին ողջունում ենք նորա առաջին լաչողակ փորձի համար, աւարտել է իւր ուսումը Զուիցերիայում Բերնի համալսարանի Փիլիսոփայութեան բաժնում, որի համար և ստացել է այդ համալսարանի Փիլիսոփայութեան դոքտորի տիկղոսը։

ՔՈՒՐ ԳԵՏԸ, գիշերը մայիսի 13-ից դէպի 14-ը, մի քանի օր տեղացող անձրևներից լեռում, դուրս եկաւ ափերից։ Ջուրը Թիֆլիսում բարձրացել էր վաղուց չտեսնուած չափով և իւր տակն արաւ Սաղ (Պեսկի) կոչուած թաղը։ Հաւլաբարի մօտ, ուր Քուրը սղմած է երկու քարանասարների մէջ, ջուրը բարձրացել էր գրեթէ մինչ երկաթէ կամուրջը, որը հեղեղելու համար հազիւ մի կէս արշին էր պակաս։

† ԳՐՈՍ։ Մայիսի 24-ին վախճանուեց Եակով Կարլովիչ Գրոս, գիտութիւնների ակադեմիայի փոխ նախագահը։ Հանգուցեալը (ծնուած 1812 թուականին Պետերբուրգում) նշանաւոր լեզուաբան էր և մեծ ծառայութիւններ ունի արած ռուսաց գրականութեանը։

Ռուսաց լեզվի խնդիրներում Գրոտը (գերմանացի) վայելում էր առաջին հեղինակութիւն, որպիսին իրանց առաջ վայելում էին վոստոկով (չեղացի Օստէն) և Դալ (Даль, ծագումով դանիացի)։

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ։

1. ԱՐԾՐՈՒՆԻ, բժիշկ. Վ.—«Խոլերա (հանրամատչելի զրոյցներ և խրատներ)»։ Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ.—Թիֆլիս, տպ. Մ. Ռոտինեանցի, 1893 թ., գինն է 5 կոպ.։

2. ԼՈՏԻ, Պիեր, թարգմ. Նիկողայոս ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԻ ԱՆԻ.—«Ուղևորութիւն Զերմոդորիալում»։ Թիֆլ. տպ. Շարաձէ. 1893 թ., գինն է 10 կոպէկ։

3. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ, Նիկ.—«Կովկասեան հանքային ջրեր»։ Աբասթուման, Բորժոմ, Պեատիգորսկ, Ժելեզնովոդսկ, Եսենտուկ, Կիսլովոդսկ, Թիֆլիս։—Թիֆլ., տպ. Շարաձէ, 1893 թ., գինն է 10 կ.։

4. ՀԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, Զաքար.—«Ցարական նախագիտելիք բնական գիտութեան»։ № 1. Զուր (11 պատկերով)։ Թիֆլիս, տպարան—վիմագրատուն Ա. Մելիք-Շահնազարեանի, Թիֆլիս, 1893 թ., գինն է 35 կոպէկ։

5. ԱՏՐՊԵՏ.—«Սարրաֆ, ողբերգութիւն հինգ արարածով, Թիւրքահայերի կեանքից»։—Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1893 թ., գինն է 30 կոպէկ։

6. ՖՐԴՈՒՍԻ, թարգմանութեամբ Սամուէլ ԳԻԻԼԶԱԴԵԱՆՑԻ.—«Ռոստամ և Սոհրաբ (ամբողջ վէպ) և զանազան հատուածներ Շահ—Նամալից»։ Թարգմանութիւն պարսկերէն բնագրից։ Հրատարակութիւն Գ. Թ. Ալվազեանի։ Շուշի, տպ. Մ. Մոսհոեսի Յակոբեանցի։ 1893 թ., գինն է 60 կոպէկ։

7. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Միհրան.—«Իրական կեանքի նկարներ»։ Երկրորդ տպագրութիւն։ Կ. Պոլիս, տպ. Նշան Կ. Բերբերեանի. գինն է $2^1/_2$ զրուշ։

8. ԿՐՊԷ.—«Պատկերներ կեանքից, արտատպած Մեղու Հայաստանի և Նոր-Դար լրագիրներից 1879—1891».—Ալեքսանդրապոլ, տպ. Գ. Սանոլեանցի, 1893 թ., գինն է 20 կոպէկ։

9. ՊՈՏԻԱՏԱ, Ն. Ա., թարգմ. Պոստ Մելիք Շահնազարեանցի.—«Վիլլիամ Զաննինգ, նրա կեանքը են գրածները»։ Հրատար. Բաքուայ մի խումբ երիտասարդների։ Բաքու, տպ. Տէր Յովհաննիսեանցի, 1893 թ.. գինն է 10 կոպէկ։

10. **КУЧУКЪ-ІОАННЕСОВЪ, Х. И.**—«Объ Армянской рукописи IX вѣка, приподлежащей Библ. Лазар. Инст. Вост. языковъ». Изъ I тома III выпуска „Древностей Восточныхъ“ Имп. Моск. Археол. Общ.—Москва, тип. Черным. 1893.

11. ԳՐԻԳՈՐԵԱՆ, Լևոն.—*«Վայ կորչողին» (վէպիկ)։ Հրատ. Գ. Տէր-Խաչատրեան, Թիֆլիս, տպարան Ց. Մարտիրոսեանցի,* 1893 *Թ. գինն է* 5 *կոպէկ։*

ՊԱՐՈՆԵԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ, *Հրատարակութեամբ գրավաճառ պ. Վահան Գ. Զարդարեանի, գինը* 50 *կոպէկ, վաճառւում է Թիֆլիսում, Կենտրոնական Գրավաճառանոցում։ Հասոյթից մի մաս պէտք է տրւի հանգուցեալ երգիծաբանի որբերին։*

Վրիպակներ «Մուրճ»-ի նախընթաց № 4-ում։

էջ 573, *Հէյնէ'ի ոտանաւորից առաջին տողը պէտք է լինի՝* Ein Fichtenbaum *և այլն։*

էջ 607, *Պ. Մաղաթեանի յօդւածի գլուխը նշանակած է՝* IV, *պէտք է լինի* VI.

էջ 658, *Պ. Ղուկասեանցի յօդւածում, տող* 16—17 *պէտք է լինի՝ հայ ծառայողների վերաբերմամբ տենդենցիա է երևում յանձնել ստորին ատեանների պաշտօններ...*

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ